

Սևանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

**Համայնքապետարանի աշխատակազմի
ճարտարապետա-շինարարական բաժնի առաջատար մասնագետ
/ Ծածկագիր՝ 3.1-11/**

Առաջատար մասնագետը՝

- ա) Կազմում եւ մշակում է համայնքի բնակավայրի քաղաքաշինական հատակագիծ-սխեմաներ: Համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծին եւ հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմային համապատասխան՝ կազմում և ներկայացնում է համայնքի առանձին հատվածների եւ քաղաքաշինական համալիրների գոտիավորման մանրամասն հատակագծման, հողաշինարարական եւ կառուցապատման նախագծերը,
- բ) իր անմիջական ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության, համայնքի փողոցների հրապարակների անվանափոխության, շենքի և շինությունների համարակալման վերաբերյալ: Աջակցում է համայնքի քաղաքաշինական և հողային կադաստրի վարմանը, համայնքի հողային հաշվեկշռի կազմմանը, համայնքի տարածքի գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության ապահովմանը, իրականացնում է հողերի համակարգչային քարտեզագրում, ինչպես նաև գրությունների բլանկների մշակման տեխնիկական մասի ապահովմանը,
- գ) առաջարկություններ է ներկայացնում ապօրինի հողազավթումների, ինքնակամ շինությունների կանխարգելման և կասեցման վերաբերյալ,
- դ) Իրականացնում է «Համայնքային կառավարման էլեկտրոնային համակարգ» ծրագրի գործավարություն ենթաբաժինը, մասնավորապես՝ քաղաքապետի որոշումների նախագծեր, տուրքեր ենթաբաժինը, մասնավորապես՝ թույլտվություններ, շինթույլտվություն, քննման թույլտվություն:
- ե) Կազմում է տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և ներկայացնում է իր անմիջական ղեկավարին,
- զ) Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում ,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում օտար լեզվի (լեզուների) տիրապետում (ազատ կարդում և կարող է բացատրվել) :

Մրցույթը կանցկացվի 29.09.2017թ.՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանում / ք. Սևան, Նաիրյան 164/

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը).
- բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.
- գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

զ) օրենքի 12 հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.

է) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.

ը) անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, համայնքապետարանում / ք. Սևան, Նաիրյան 164 / և ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, մարզպետարանում / Գրիգոր Լուսավորչի 36 / :

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏՆ Է՝ 12.09.2017թ.

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ / ք. Սևան, Նաիրյան 164, հեռ. 0261-4-00-05 / և ք. Գավառ, մարզպետարան: